



ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԹԻԻ 187

30 ԱՊՐԻԼ 1915

ԿՐՕՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ

ՇԱՐԱԹԱԹԵՐԹ

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԺԱՐԱՆԻ

Անոնք որ կը փափաքին Արձագանցի պակաս թիւերը լրացնել, իւրաքանչիւր թիւի համար մէյմէկ դահեկան ղրկելու են:

ԱԶԳԱՅԻՆ ՍԻՒՆՀՈՂՈՍ Կ. ՀԱՅՈՑ

Տպագրութիւնը աւարտած է և կը ծախուի	40 դահեկանի:
Գաւառներու համար փոսքայի ծախք	10 դահեկան:



ԿԱԹՈՂԻԿԷ ԱՐՁԱԳԱՆԳ

ԿՐՈՆԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ
ՇԱՐԱՐ-ԱՐԹ-ԵՐԹ

Հիմնգեւորդ տարի 30 Ապրիլ 1915 թիւ 187

«Սրբազան Քահանայապետն Պիոս Ժ. կը մաղթէ որ Կաթողիկէ Աւանդաւանդ շարքաբերքը շարունակէ Հայ կաթողիկէ ժողովրդոց մէջ, մանաւանդ ի գաւառս, փրկարար առաքելութիւն մը կատարել, ի բարգաւաճման կրօնից եւ ի հոգեւոր օգուտ հազիւներու: Այս մաղթումաց արդիւնաւորութեան համար Սրբազան Հայրն սրտազին կ'օրհնէ յիշեալ Շարքաբերքը, ինչպէս նաեւ անոր խմբագիրներն եւ ընթերցողներն:»

Նամակ կարգ. Մեծի Սբ. Լազի, առ Ամեն. Տ. Պօղոս Պետրոս Ժ.Դ. Թեղեւան Հայ-Կաթողիկէ Պատրիարք:
23 հոկտեմբերի 1912, բնդ 60780 քուտանմարտ:

ԴԵՊՔԵՐ ԵՒ ԱԿՋՐՈՒՆՔՆԵՐ

ՄԱՅՈՍ ԱՄԻՍՈՐ

Մաղիկներու ամիս է Մայիս ամիսը. բնութեան վերազարթնումի, վերակենդանութեան, մարդոց ցնծութեան, ապագայի բեղմնաւորութեան ու կեանքին աւետաւորն է Մայիս ամիսը:

Ամբողջ բնութիւնը ծայրէ ծայր նոր կենդանութիւն զգեցած է, տեսէ՛ք. անցած են ձիւն սառույց, փուքն ու փութորիկ. անցած է անգութ ձմեռուան մատներուն ցանած մեռելութիւնն համակ:

Հիմա մերկացած բուրաստաններ պերճապերճ կը զգենուն. գոգցես ցածքած վարդենիք թարմ թարմ կը ծլին ու ծաղիկներ անթիւ զերկիր կը ծածկեն բիւր բիւր երփներանգ. թռչնիկներ կ'երգեն պուրակներու մէջ, ձկնիկներ կը կայտուեն ալեակներու մէջ. անհուն գեղգեղ մը, անհուն բոյր մը, անհուն լոյս մը կը բարձրանայ կը ծաւալի անսահման անծայրածիր եթերին մէջ. կը արփեն սրտեր թունդ ի թունդ:

Այսպէս, Մայիս ամիսը բնութեան ամենէն գեղադէշ եղանակն է. տարուան գեղեցկագոյն ամիսը, յաւերժական երիտասարդութեան նշանն ու աւետաբերն է:

Անմահ հոգւոց կեանքին մէջ սա-
կայն, յաւիտենական երջանկութեան
սպասումին մէջ, ո՞րն է խորհրդաւոր Մա-
րիա ամիսը. մեր նախահարց մեղքին
ձմեռնային մեռելութենէն վերջը կեն-
սաբեր վերազարթնումը, վերսկենդա-
նութիւնը հոգւոյ, բարոյ և ճշմարտու-
թեան, նորափթիթ ծաղկումը ապա-
ռածսիրութեան և առաքինութեան, ա-
ռիթը փրկութեան և յաւիտենական եր-
ջանկութեան ո՞վ է:

Անուանեցինք գրեթէ, ՄԱՐԻԱՍՆ է
այն. այն շնորհազարդ, առանձնաշնոր-
հեալ, գեր քան հրեշտակային արարա-
ծը՝ որուն անհասանելի գեղեցկութեան
համար իր ստեղծողն իսկ, Բանն Աստ-
ուած, որ հաճեցաւ բնակիլ անոր ամե-
նամաքուր տաղաւարին մէջ, գոչեց հի-
ացմամբ. Ամենեւ իմ գեղեցիկ ևս մերձա-
ւոր իմ, կասարեալ իմ, եւ առաւ ինչ ոչ
գոյ ի քեզ. եւ ասոր համար է որ մար-
դիկ, Մարիամու զաւակները, տարւոյն
ամենէն գեղեցիկ ու երջանկաւէտ ամիսը
յատկացուցին Աստուածամօր, իբրեւ թէ
անիկայ կը ստուերագծէ անոր աննման
ու աննկարագրելի գեղեցկութիւնը. ո՛չ
միայն հոգւոյն, որ այնքան գերիվերոյ
զարդարուած է Աստուծմէ, որ ո՛չ միայն
չի կրնար իր մէկ խորհրդանիշն ունենալ
ստեղծուած իրերու մէջ, այլ եւ ոչ կա-
րելի է մեզ ըմբռնել զայն, այլ եւ գե-
ղեցկութիւնը իր անարատ մարմնոյն, որ
չքնաղ է և աննման, իբրեւ Գերահրաշ
ծաղիկ, թուրեալ յեղեմայ, հոս անմա-
հոռեան ծննդոց եւայի... ծաղիկ որ ի
ժամու եւ զպառլոյն որով անմահացաւ:
Մարիամու այն վեհափառ հոգւոյն՝ ու
րու վրայ Աստուած ինքնին չի կրցաւ
արատ մը գտնել, օթեւան և ընկեր ե-

ղող մարմինն ալ անոր արժանաւոր կեր-
պով գեղեցիկ ստեղծուած է. Ամենեւ իմ
գեղեցիկ ևս, կասարեալ իմ, մերձաւոր իմ:

Քրիստոնեայ ժողովրդեան ընդհա-
նուր համաձայնութիւնը միաբերան կ'ա-
ղաղակէ այդ ճշմարտութիւնը: Մարիա-
մու Ապտուածամօր ճշգրիտ և վաւերա-
կան պատկերը չժառանգեց զժբախտա-
բար քրիստոնէին որդիական բարեպաշ-
տութիւնը. սակայն ոչ մի հաւատացեալ
պիտի հաւանի մարմնաւոր ամենաթեթե-
ւեղութիւն մը իսկ վերագրել Աստուա-
ծամօր: Քրիստոնէական դարերու հա-
ւատքին բոլոր վկաները ցոյց տուած են
Մարիամը իբրեւ տիպար ամենամա-
քուր, ամենաներդաշնակ, ամենակա-
տարեալ գեղեցկութեան, մարդկային գե-
ղեցկութեան իբրեւ գաղափարական:

Եւ հաւատացեալներուն այս միա-
ձայնութիւնը կը հաստատուի եկեղեցւոյ
Ս. Հայրերէն, առաջին դարերէն սկսե-
լով. ո՞ր մէկը պիտի կարենանք յիշել.
անթիւ հատորներ պէտք էր լեցնել.
«Մարիամ իր մարմնովն ալ ամենա-
մաքուր գոհարն է կուսութեան. պայ-
ծառ երկինք մը, ծալրագոյն գեղեցի-
կութեան կենդանի մէկ պատկերը, կեն-
սունակ արձան մը՝ զոր ինքնին Աստ-
ուած քանդակեց» (Ս. Անդր. Եր.) : Ա-
մէնքը կը միաբանին քարոզելու թէ՛
Մարիամ բնութեան և շնորհաց գլուխ-
գործոցն է. Կոյս մը՝ որուն չնաչխար-
հիկ գեղեցկութիւնը նման մը չունի. բո-
լորովին գեղեցիկ մարմնով, գեղեցկա-
գոյն հոգւով ու սրտով, հրեշտակային
իր մարմնոյն մէջ, աւելի հրեշտակային
իր հոգւոյն մէջ:

Եւ անոնք ամէնքը գրեթէ Մարիա-

մու յարմարեցին Երգ-Երգոյ գրքին բա-
նաստեղծական նկարագրութիւնները:

Հին Օրինաց մէջ եղան սուրբ մար-
դիկ որ Քրիստոսի նախանկար օրինակ-
ներն ըլլալս. արժանացան. Աբէլ, Իսա-
հակ, Դաւիթ, Սողոմոն, ևն.: Ճիշդ այս-
պէս եղան եւ կիներ՝ որոնք Մարիամու
նախատիպ օրինակներն էին. Սառա,
Հոբեեկա, Հոաբէլ, Աբիգեա, Յուդիթ,
Եսթեր, ևն.: Ասոնց իւրաքանչիւրին հա-
մար Ս. Գիրք կը վկայեն թէ գեղեցիկ
էին յոյժ, գեղեցիկ երեսօք յոյժ, առաս-
խնաստութեամբ եւ գեղեցիկ տեսլեամբ
յոյժ: Ահա ուրեմն Ս. Գիրքը նախագու-
շակեց անոնց մէջ աննման և միակ գե-
ղեցկութիւնը Ս. Կուսին, որուն համար
երկնաւոր Փետտն աղաղակեց. Մի է ա-
ղաղակ իմ, կ'ստարեալ իմ: Ուստի ա-
մենամեծ աստուածաբաններէն մին՝
Սուարէշ կրցաւ ըսել. «Կուսին բնական
կատարելութեանց նկատմամբ պէտք է
ըսել թէ՛ իր մարմինը ամէն կերպով
կատարեալ եղաւ այն ամէն չափու եւ
համեմատութեանց մէջ, որոնք իր սե-
ռին պատշաճաւոր են: Իր վրայ գրող
Ս. Հարք այսպէս սորվեցուցին և յան-
դգնութիւն կ'ըլլար զայս ուրանալ»: Իսկ
Աստուածաբաններուն գերագոյնը Ս.
Թովմաս, կ'ըսէ թէ «Մարիամու մարմնոյն
գեղեցկութիւնը գերմարդկային էր»:

Այս աննման գեղեցկութեան հիմ-
նական պատճառն է Աստուածամայրու-
րութիւնը: Մարդեղութեան աղբերակ-
ներէն հոսեցաւ Մարիամու այս առանձ-
նանորհումն ուր Մարիամ իր մարմնէն
և արիւնէն տուաւ Աստուծոյ Որդւոյն.
զայն սնոյց իր կաթով. ուստի և ճըշ-

մարիտ մօր մը տիպարը, նմանութիւնը
դրոշմեց անոր վրայ. և մօր մը՝ որ ան-
խառն մաքուր կուսութեամբ ծնաւ զայն.
անկէ միայն միայնակ բողբոջեցաւ Յէս-
սէի ծաղիկը, Հոգւոյն Սրբոյ ջերմացու-
ցիչ ճառագայթներով: Հայրն յաւիտե-
ական ծնաւ իր Որդին ի յաւիտենից՝
առանց ընկերի. և Որդին էր «Նշոյ
մշտնջենաւոր յուսոյն եւ հայելի աւա-
րաւ Աստուծոյ ազդեցութեան եւ պաւ-
կեր առաստօրեան նորա. ոյր վասն եւ
Քրիստոս կ'ըսէր. Որ ետես զիս, ետես
զհայր: Իսկ Մարիամ մարդկութեամբ կը
ծնանի զՔրիստոս զՈրդին Աստուծոյ.
ուրեմն որդին նման է՝ իբրեւ մարդ,
նաեւ իր Կոյս Մօրն, որ նաեւ աննման
սիրոյն պատճառաւ որով սիրեց իր որ-
դին, նմանեցաւ անոր. անանկ որ Մա-
րիամու մարմնոյն ստեղծման ժամանակ
Ս. Երրորդութիւնը կը խորհէր Քրիստո-
սի մարմնոյն վրայ, որ Մարիամու մարմնէն
պիտի առնուր իր մարմինը: Արդ Քրիս-
տոս եղաւ Գեղեցիկ տեսանելով քան
զառնեալն որդիս մատղկան, Քրիստոս,
որոյ մարդկութիւնը անձնաւորապէս
միացած է Բանին Աստուծոյ, կերպա-
րանաւորուած ի Հոգւոյն Սրբոյ, ան-
մեղ անարատ, ծնած ի կուսէ, Աստու-
ծոյ ամենակատարեալ գործը: Ուրեմն
իւր Մայրն ալ, միշտ Կոյսը, Անարատը,
Հօր դուստրը, Հոգւոյն Սրբոյ Հարսը, մի
է՝ կ'ստարեալն ու գեղեցիկն ի կ'ստայս:

Ահա՛ Մայիս ամսուան մէջ Կուսու-
թեանց մօր առջեւ պիտի իյնանք, եւ
ա՛յս Մայիս ամսուան մէջ կրկնակի, քա-
նի որ մեր Սրբազան Հայրը Բենեդիկ-
տոս ԺԵ. կը յորդորէ զմեզ վստահու-
թեամբ մատչելու այս գթած Մօր ալ:

քունական Գահոյից առջեւ և պաղա-
տել խաղաղութիւն, այն Մօրմէն՝ զոր
մեր Մեծն Նարեկացին կոչեց. «Հրեշտակ
ի մարդկանէ, մարմնատեսիլ քերովբէ,
մաքուր որպէս լոյս, բայտ նմանութեան
պատկերի արուսեկին բարձրութեան,
բարձրասցի պատիւ քո ինեւ և ցուցցի
փրկութիւն իմ քեւ, օրհնեալդ միայն
ի շրթունս անբիծս լեզուաց երջանկաց».
այն Մօրմէն՝ որուն մեր Ուղղափառ Եկե-
ղեցին կ'երգէ սխրալի հաւատքով. «Ա-
ռաւօտ խաղաղութեան և արուսեակ
զուարթարար, զբախտ աստուածային և
արեւելք իմանալի, Մարիամ հրաշագեղ
ծնեալ ի յՍննայէ, ի մայրութիւն քո
հրաւիրեալ Բրիտոս Որդի Աստուծոյ»:

«Բարեխօսեա՛, խնդրեա՛, աղաչեա՛,
զի ըստ անճառելի մաքրութեանդ և ահա
զբանիդ հաւատամ զընդունելութիւն»:

ՊԻՈՍԺ. (*)

(Շար.)

Բասնէրորդ զարուն սկիզբները Ս. Եկե-
ղեցին ունեցաւ — և ամբողջ աշխարհի զար-
մանքն եղաւ. — Բահանայապետ մը, նման
սրբակեաց Կոնոն Պապին (636—637), որ կը
կրէր ճշմարիտ Տիպար հրեշտակային, մեծարեցի
սրբութիւն, բաւ ճշմարտախօս, սրտկառնի ծե-
րութիւն, միասնիս ոգի, հանդարտ կենցաղավա-
րութիւն՝ կրօնասէր կեանքով, որ բնաւ երբեք
աշխարհային դասերու և գործառնութիւններու
խառնուած ձեռնաւնութիւն եղած չէր: Այս խօս-
քերը որ ան ատեն կրնային իրաւամբ յար-
մարիլ Մարդոյի նախնիքաց վարուց, Ռիէզէյի
Չերմեոսնայն և աշխատատէր քահանային, օ-
րինակելի ժողովրդապետին, հազուայ բարի ու
քաջ հովուին՝ Մանդովայի եպիսկոպոսու-
թեան ու վենետիկի պատրիարքութեան մէջ,
այսօր կրնար քանդակուիլ Մայրաքոյն Բա-
հանայապետին գերեզմանին վրայ, խորունկ
անջնջելի տառերով, այնչափ ստուգուեցան
անոնք Պիոս Ժ. ի ամէն գործին մէջ, հրա-

շալի ու գերագնիւ եղանակաւ, իբր պատ-
մական ճշգրիտ վերջաբան մը:

Հոգովմէական — Բահանայապետութեան ա-
հադին բեռան առջեւ, ա'յն դարհուրելի պա-
տասխանատուութեան առջեւ, զոր կը ստանձ-
նէ նոր ընարեալը, Աստուծոյ, Եկեղեցւոյ և
բովանդակ մարդկային ընկերութեան համ-
դէպ, ի կրնար մտածուիլ մարդկեղէն էակ մը
որ անկեղծօրէն յետս չընկրկի: Բայց Պիոս
Ժ. անմխիթար եղաւ իր ընարուած ըլլա-
լուն համար, ինչպէս ըսինք: Անճանաչելի
դարձած էր, ա'յնքան փոխուած էր իր դէմ-
քը, և իր աչքերը միշտ այնպէս քաղցր, եր-
կու աղբիւրներ եղած էին արտասուաց, Դի-
մադրեց, աղաչեց, թախանձեց, բայց վեր-
ջապէս հարկադրուեցաւ աստուածային կա-
մայ առջեւ գլուխը խոնարհեցնել: Իր խո-
նարհ հոգին ճնշուած կը զգար պարտադրուած
արտաքին մեծութեան փայլերէն՝ որոնք ան-
միջապէս զինք չըջապատեցին և շատ ժա-
մանակ անցաւ մինչեւ որ վարժուեցաւ, և
ուսկայն երբեք կատարելապէս չկրցաւ վար-
ժուիլ անոնց և անձնատուր ըլլալ:

«Ահա ինչպէս հագուեցուցին զիս» կ'ըսէր
իր բարեկամներուն, և յորդ արցունք կը
թափէր. — «Ո'րքան տաժանելի բան է պա-
լատական այս սովորութեանց հետեւիլ, կ'ը-
սէր. բայց կ'երեւակայեմ թէ պարտէզի մէջ
կալանաւորուած ու կապուած Յիսուան եմ,
երբ զիս հոս հոն կը տանին զինուորներէ
չըջապատուած»:

Ինքը սակայն հրամաններ տուաւ որ կա-
րելի եղածին չափ նուազեցունին այս ար-
տաքին սովորութիւնքը: Եւ ստիկայ յառաջ
չէր գար արհամարհանքէ, այլ իբրն բնածին
մէկ հակակրութենէն զոր ունէր ամէն տե-
սակ շքեղութեան դէմ՝ ո'րքանալ օրինաւոր
ըլլար, և վարուց պարզութենէն, զոր ժու-
ռանգած էր իր խոնարհ ծագումէն և իր ա-
ռաջին դաստիարակութեան գրոշմէն՝ որ խո-
րապէս քրիստոնէական եղած էր, Ռիէզէի
պղտիկ տան որմերուն մէջ, իր սրբակեաց
մայրիկին ծունկերուն վրայ, հաւաւնող նա-
հապետական կեանքի գրեթէ կառչած ընտա-
նիքի մը մէջ:

(*) Յեւ Թիւ 485, էջ 91.

Նոյնպէս չուզեց բնաւ որ իրենները՝ գործնք պորովալի սիրով կը սիրէր, փոխէն իրենց կենցաղի վիճակը, Քահանայապետութեան փառաւորութեանց մէջ այնքան հիասալի օրինակ մը տալով՝ մարմինէն ու արիւնէն բացարձակ անջատուով, այնպէս որ բոլոր աշխարհ զարմացած մնաց ու շինուեցաւ:

Առաջին շաբաթներուն մէջ, ինքն իսկ պատմած է, իրեն ներկայացաւ քահանայապետական Պատուանուններու Վերակացուն, և խոնարհաբար ինդրից թէ ի՞նչ պատուոյ տիտղոս պիտի յատկացուի իր քոյրերուն:

— «Քահանայապետին քոյրերը» գոչեց Պիոս, ժպտելով:

— «Գիտեմ. այո՛, Սրբազան Հայր, բայց սովորութիւնը...»

— «Քահանայապետին քոյրերը» կրկնեց Պիոս Ժ., աւելի պնդելով:

— «Ձեր Սրբութիւնը թող որոշէ թէ անոնց ո՛ր տիտղոսը յարմարագոյն է, Դքսուհի... Իշխանուհի...»

— «Էհ, ըսի. «Քահանայապետին քոյրերը»: Չէ՞ք տեսներ թէ անոնք միայն Քահանայապետին քոյրերն են աշխարհիս վրայ. Ասկէ աւելի ի՞նչ պատուականագոյն տիտղոս, զոր Աստուած անոնց տուաւ ուրիշներու դերադասելով զիրենք: Ո՛չ, ո՛չ. մէկզի թողունք այս ունայնութիւնները. իմ ընտանիքիս անդամները պէտք է մնան միշտ ինչ որ մինչեւ հիմա էին, և թող չմտածուի ուրիշ բանի վրայ»:

Եւ պատշաճ է հոս ըսել թէ Քահանայապետին քոյրերն ալ, սիրալիր քեռ զուտորերն և ուրիշ ազգականները՝ այնչափ արդար, ա՛յնչափ բնական գտան իրենց ընտանիքին օգոստափառ Դլխոյն այս գործելակերպը, որ իրենց հին կենցաղէն բան մը չփոխեցին, իրենք ալ անկեղծաւոր պարզութեան ու քրիստոնէական զգացման սքանչելի օրինակ մը տալով:

* *

Պիոս Ժ. Քահանայապետական Դահուն վրայ բան մը չփոխեց իր անձնական կենցաղավարութեան սովորոյթէն, միայն թէ զայն ընդարձակեց այն լայնատարած դաշ-

տին վրայ զոր աստուածային նախախնամութիւնը բացած էր իր առջեւը, կ'ուզենք ըսել Ընդհանրական Սկզբեցւոյ:

Իր ամէն առանձնական վարմունքին մէջ անխախտ պահեց ապրելու միեւնոյն եղանակը, աշխատանքը բաժնելու միեւնոյն ժամանակացուցակը. ինչպէս որ Վենետիկի մէջ կ'ընդունէր իր զրառենիտկին մէջ, իր գրասեղանին առջեւ որ լիցուած կ'ըլլար վրայէ վրայ զիգուած թուղթերով, տպագիրներով, վաւերաթուղթերով, անհատնում նամակներով, այսպէս շարունակեց Վատիկանու իր ընդարձակ Մատենադարանի Դահլիճին մէջ, դեռ աւելի խառնակ գրասեղանի մը առջեւ: Հոն կը հոսէին ամէն օր բովանդակ աշխարհէ թղթակցութիւններ, բոլոր քահանայապետական պաշտօնատանց զիւաններուն պարութեանը, ամէն ազգաց եպիսկոպոսներուն տեղեկագիրներն ու առանձնական գործերը, ամէն վիճակի հաւատացեալներուն ազանքներն ու աղերսագիրները, սկսելով վեհապետներէն, կայսրներէն, թագաւորներէն՝ մինչեւ ամենախոնարհ ու մոռցուած կիներն ու այրին, որ կը հայցէր նոյապետիկ մը հիւսնոյ կամ անգործ ըլլալուն համար: Այս ամէնը կը տեսնէր անպատճառ ու ձեռքէ կ'անցընէր Պիոս Ժ. և անոնց պատասխանները ինքը կը գրէր, խնայելու համար՝ ինչպէս սովորած էր ըսել ժպտելով, իր քարտուղարներուն:

Այսպէսով նա կեդրոնն էր ամէն բանի, և կ'ըսէր թէ աստիկով կը զգար որ իր զատակներուն ամէն մէկուն կը մօտենար յատկապէս, աւելցնելով նաեւ զանոնք մխիթարելու համար նոր աշխատութիւն մըն ալ, որ երբեմն նոյն իսկ շատ տաժանելի դարձաւ, իր իսկ ձեռագիրովը ստորագրելով, — ստէպ յարելով նաեւ հայրական քաղցր ու խանդակաթ բառեր, — անթիւ անհամար թուղթեր որոնք կ'ըլլէին իր օգոստափառ նկարը:

— «Ձեռ կրնար անոնց քովն երթալ, կ'ըսէր, այս կերպով գտնէ իմանալն որ Քահանայապետը անոնց ամէնուն մօտ է»:

* *

Իբրեւ Հովիւ Մանգովայի ու վեհեփիկի եկեղեցիներուն, ինքզինքը բովանդակ նուիրած էր՝ անկե թան նորոգելու ի Քրիստոս, և անկե թան նորոգելն ի Քրիստոս իր ամենամեծ ու միակ գործն եղաւ իբրեւ Քահանայապետ, միեւնոյն առաջադրութիւններով, միեւնոյն գաղափարներով, միեւնոյն ոճով և յօրինուածութեամբ, զրեթէ սա տարբերութեամբ որ ամէն ինչ կը համապատասխանէր իր նոր ամենարարձր պաշտօնին մեծութեան և ընդհանրականութեան։ Իր ունեցած կեանքին մէջ զինքը քիչ մը մտերմութեամբ ճանչցող մէկը, իր Քահանայապետութեան տարիներուն մէջ ալ կրցաւ դիւրութեամբ նախատեսել իր գաղափարը և նախագուշակել իր գործը։

Ընկերական կեանքի մէջ քրիստոնէական հոգեւոյ նորոգութիւնը իր բոլոր ջանքերուն առարկան կազմեց։ Իր առաջին բարենորոգութիւնը եղաւ երգն ու սրբազան երաժշտութիւնը։ Բայց այս ալ, թէեւ զայն հրամայող ու կարգադրող իր Կոնստանտինոսն ու վաւերաթուղթերուն հանդիսաւորութեան ու ճոխութեան պատճառաւ բացարձակապէս նոր էջ մը կը բանայ հռովմէական քահանայապետութեան տարեգիրներուն մէջ, ռակայն և այնպէս պէտք է նկատուի միայն իբր անմիջական հետեւութիւն մը՝ բարձրագոյն նպատակակէտի մը։

Քրիստոնէական հոգին պէտք է ստացուի իր առաջին և ամենակարեւոր աղբերակէն, որ է գործնական մասնակցութիւն ամենասուրբ խորհրդոց և Եկեղեցւոյ հրապարակական և հանդիսաւոր աղօթքին։ Արդ՝ երկնաւոր շնորհքները չեն իջներ եթէ ոչ երբ հայցուին, թախանձուին աղօթքով, և աղօթքը հարկ է որ ըլլայ սուրբ, մաքուր, անարատ, որպէս զի կարենայ Աստուծոյ հաճելի և մեղի համար արդիւնաբեր ըլլալ։ Այս պատճառաւ է ահա կարեւորութիւնը հիմնական վերանորոգութեան սրբազան երգերու և գեղեցիկանքներու, որոնք ա՛յնքան սերտ միաւորութեամբ կը զուգուին ծիսական աղօթքին ամէն մասերուն։ Եւ ուրիշ նաեւ որ ժողովուրդը մասնակցի Եկեղեցւոյ երգեցո-

ղութեան, որպէս զի ասանկով աւելի ուղղակի կերպով ընկերանայ հրապարակական աղօթքի, և աստուածային պաշտամունքի ծիսակատարութիւններէն ամէն լաւ և օգտակար պտուղները քաղէ, քանի որ այդ արարողութիւնները մի միայն Աստուծոյ փառաբանութեան և հաւատացելոց շինութեան ու սրբացուցման համար կը կատարուին։

Եւ ժողովրդեան քրիստոնէական հոգին չպիտի կարենայ նորոգուիլ, եթէ անոր՝ կղերին հետ ունեցած շփումը աւելի յաճախ, աւելի կարգաւորեալ, աւելի սերտ ու մոտերիմ ըլլայ։ Եթէ չգատարակուի նա հաւատքի ու քրիստոնէական բարեպաշտութեան պարտականութեանց մէջ, եթէ ամենափափուկ մանկական անտիական հատակէն սկսելով՝ սղայոց սրտիկներուն մէջ չիթ առ չիթ չկաթեցուի հաւատքի ու աստուածապաշտութեան ան գագուտը, և ի գործ չածուի ամէն կերպ միջոց և հրահանգ՝ զանոնք պահելու համար մաքուր ու անմեղ, Աստուծոյ թշնամի եղող այսօրուան ընկերութեան խոր ապականութեան մէջ։

Ուստի, իբր կանխազգոյշ և խնամոտ եպիսկոպոս, հրամայեց Պիոս Ժ. որ կատարուի Հռոմայ մէջ սուրբեկական հանդիսաւոր այցելութիւնը, այսինքն՝ ամէն ժողովրդապետութեանց, վանքերու, դպրոցներու եւ հոգեւորական հաստատութեանց գործառնութիւններուն քննութիւնը վիճակաւորին կողմէ։ Այս կանոնական այցելութիւնը շատ տարիներէ ի վեր բնաւ չէր գործադրուած, ուրիշ որ այն կատարուէր շատ մանրամասնօրէն և տարածուէր ամէնուն անխտիր, նաեւ այն կրօնաւորական հաստատութիւններու, որոնք հին արտօնութիւններով կրնային իրենք զիրենք զերծ կամ ազատ նկատել։ Սեծ կորովով կարգաւորեց Հռոմի ժողովրդագետութիւնները, նոր և մեծագոյն պէտքերուն համաձայն, ըստ որում՝ քաղաքը բոլորովին փոխուած ու մեծցած էր։ առանց նայելու մեծաքանակ ծախքերու, եկեղեցիներ ու մատուռներ կոռոյց նոր թաղերու մէջ։ մասնաւոր ու շատ ճշդուած կանոններով վերահաստատեց ժողովրդապետական քարոզն ու

Աւետարանի մեկնութիւնը և քրիստոնէական վարդապետութեան աւանդումը ժողովրդեան, և ասոր ի դիւրութիւն՝ ամենուն համար միօրինակ բնագիր յօրինել տուաւ. մանաւանդ բովանդակ կաթողիկէ Եկեղեցւոյ համար ընդարձակեց այս միօրինակ ուսուցման կարեւորութիւնը. Յիշելով վերջապէս աստուածային վարդապետին խօսքերը՝ Թող տեսնէք որ պօգիկները ինձի գաւ, բերաւ Յիսուսի, Ս. Հաղորդութեան սեղանին, գունդազունդ փոքրիկ մանուկներ, որոնք հազիւ ի վիճակի ըլլան ճանչնալու այն մեծ խորհուրդը որուն կը մերձենան. ինչպէս միշտ գործադրուած էր Եկեղեցւոյ ամենահին ժամանակներուն մէջ. որպէս զի աստուածային շնորհքը կանուխէն տրամանայ անոնց անմեղ հոգեակներուն, այնպէս որ կարող ըլլան վերջը զօրաւորագոյն վահանով դիմագրել աշխարհիս ապականութեան:

Առաջին տարիներուն մէջ, երբ դեռ իր ոյժերն ու կորովը աննկուն էին, Մայրագոյն Քահանայապետը պարզ ժողովրդապետ մը կ'ըլլար՝ ամէն կիրակի իր շուրջը ժողովելով սյուլայլ թաղերու իր հոռմայեցի դաւակիներէն հազարաւորներ ու բիւրաւորներ, կ'ողջունէր զանոնք կաթողին, կը մեկնէր օրուան Աւետարանը և անկէ կը հանէր հայրական խրատներ անոնց բարւոյն և քրիստոնէական կենացը համար. Եւ իր հայրական ու քահանայական սրտին համար իրաւցնէ մեծ խնձիղ մըն էր՝ երբ խիտ առ խիտ, դաս առ դաս կու գային կը խոնէին քի թուրտիքը, մանչուկներ, աղջնակներ, որոնք առաջին հաղորդութեան մերձեցած էին. ամենուն համար ունէր զատ զատ գոված մը, յարմար խօսք մը որ քանդակուած մնար ընդ միշտ անոնց սրտիկներուն մէջ, խնայակաթ չոյանք մը, զգուանք մը, աղբիւ յիշատակ մը, միտալ մը, զոր ապա անոնք կախուած կը պահէին իրենց վիզէն:

(Շարունակելի)

ԱՅԼ ԵՒ ԱՅԼ Ք

ԲԵՆԵԴԻԿՏՈՍ ԺԵ. Ս. ՔԱՀԱՆԱՅԵՍԸ. — «Բենեդիկտոս ԺԵ., կ'ըսէ Մ. Ռընէ Պազէն, սկիզբէն գիտցաւ երեւոյթները իրականութենէն որոշել. Իր անուանակից նախորդին, Բենեդիկտոս ԺԴ. ին նման, որ նոյնպէս Պոլոնիայի արքեպիսկոպոս եղած էր, համալսարհային խռովութեան մը միջոցին ընտրուեցաւ:

Տնոր Քահանայապետը պաշտօնին գլուխը անցնելու պահուն իսկ, տեսաւ ազգերուն դէպի իրեն դառնալը:

«Քահանայապետին կողմէ ընդունուելու մեծ պատուին արժանացայ. հաւաստեցի թէ վերահաստատուած է ունկնդրութեան արաւրդութիւն մը աւելի պատկառազու և աւելի պատշաճ այն հոգեւոր, ընդհանրական յիշատակութեան որ սովոր է բովանդակ աշխարհի մէջ տեղի ունեցող մեծ դէպքերը դատել:

«Տեսայ բարերար Պապ մը և, խիստ, ուրախ եղայ իրեն քով երթալուս համար: Աշխարհի թշուառութիւնները դիտնալու բաղձանքն ու հոգը իր ազնուաշուք դէմքին վրայ դրոշմուած են:

«Շատ քիչ անգամ հանդիպած եմ այսօրան տուր և շուրջ ակնարկի մը: Բենեդիկտոս ԺԵ. կ'ուզէ գիտնալ. կը փափաքի տեղեկանալ այն ամէն գործերուն որ իրեն կը վերաբերին. մարդ կը գտայ թէ իր միտքը անկեղծ է. ինք տեսած խօսքը կը պահէ, հաւատարիմ է իր քարեկամներուն, մանաւանդ ճշմարտութեան մէջ, ինչպէս Աստուծոյ կը հրամայէ իրեն:

«Ունկնդրութեան մանրամասնութիւնները պիտի չպատմեմ. յարգութիւնն ու կրթութիւնը կը ձգտուարեն զգուշանալ այսպիսի ընթացքէ մը: Ինչ որ կրնամ ըսել այն է. համոզուեցայ թէ աշխարհը պատկառող կրուսին մէջ, ինք շատ յստակաբար է, ինչպէն արդէն կը յուսայի, և այս ընտիր հոգեւոր մէջ գտայ ոչ միայն խաղաղութեան բաղձանքը, այլ և խաղաղութեան մէջ ինչ որ

ամենէն աւելի կատարեալ է, արդարութեան ամենաշերտ զգացումը, կարեկցութիւնը:

«Վատիկանէն ելայ իրօք երջանիկ, շնորհակալ ըլլալով Աստուծոյ իր Եկեղեցւոյն բարի Պապ մըն ալ տուած ըլլալուն համար:

ՄԵՆ ՔԱՂԱՔԱՊԵՏՐ. — Բանի մը տարի առաջ Վիեննայի մէջ վախճանեցաւ մարդ մը որուն մահը ազգային սուգ մը եղաւ և որուն յուղարկւորութիւնը 700.000է աւելի մարդիկ հաւաքեց իր դադաղին շուրջը:

Ուրուագծե՛ք անոր դէմքը և ցոյց տանք անոր մեծ գործը. ասով պիտի սորվինք թէ ի՞նչ կրնայ ընել մարդ մը... լաւ քաղաքացի տ մը:

Վիեննա, Աւստրիոյ մայրաքաղաքը, միշտ կաթողիկէ քաղաք մը եղած է: Բայց 30 տարիի չափ առաջ այս կաթողիկէ քաղաքին հանրային դպրոցներէն և ոչ մէկը իրաւունք ունէր կրօնական խորհրդանշան մը պահելու: Խաչելութիւնը արտաքսուած էր ինչպէս նաև պաշտամունքի ամէն պատկեր կամ նկար: Բնականաբար քահանան ալ պաշտամունքին ենթադրուած արհամարհանքին մասնակից էր և ամենուրեք իբրեւ ժողովրդեան իշխամի նկատուելէ հետո չէր: Ազատամտութիւնը, միասակար Աւստրիոյ ինչպէս ուրիշ ամէն տեղւոյ, բանակած էր Վիեննայի մէջ իբրեւ անմատչելի ամրոցի մը մէջ: Ան կը պարծէր Նորին Կաթողիկէ Վեհափառութեան, Յրանց Նովէֆ կայսեր մայրաքաղաքը քրիստոնէութենէ ընդ միշտ հեռացուցած ըլլալուն վրայ:

Հիմա այս տխուր օրերուն յիշատակը միայն մնացած է: Բաղքին մէջ կաթողիկէ քահանան զբաւած է նորէն այն պատուի դիրքը որուն իրաւունք ունի: Բոլոր հանրային դպրոցները կաթողիկէ են: Առոնց մէջ ոչ միայն խաչելութիւնը կը մեծարուի, այլ առանց բացառութեան ամէնքն ալ մեր Տիրոջ Յիսուսի Քրիստոսի նուիրուած են յայտնադէս:

Մարդ մը ըրաւ զայս: Բայց ճշմարտացէս մարդ մըն էր այն: Մտացի էր, կամքի տէր, արի: Աստուած, որ զանիկայ այսքան լաւ կերպով օժտած էր, տուած էր անոր նաեւ

նշանդուն սիրտ մը և հզօր ճարտարիտութեան մը: Եւ, ինչպէս հայրենասիրութեան ու կրօնքի կրկին բոցով բռնկած ամէն սիրտ, կրցաւ իր շուրջը գտնուող բոլոր արի, ուժեղ, ձեռներէջ հոգիները վառել բորբոքել: Փութով բանակ մը կազմեց. և այս ընտրողներու բանակով Վիեննան ազատեց Սինակոկին և Լոթին ամօթալի լուծէն:

Այս մարդը կը կոչուի Դառլ Լուէկէր: Սկիզբները քաղաքական ասպարէզին մէջ շատ զժողովրդութիւններ կրեց: Երբ 1878ին զժողովրդական ազատամոլ կոռակցութեան հետ, որուն անդամ էր այն ատեն և որմէ կը խորչէր, ամէն մարդ կարծեց թէ այլեւս իր գործը լրացած է: Հոս կը սկսէր իր բուն ասպարէզը: Ինք, մերժուած ազատամուկներէն որ իրեն դէմ կը կոռէին, մէկդի ձգուած պահպանողականներէն սրունք անվստահութեամբ կը նայէին իրեն, և զորոնք ինք խոտութեամբ կը դատէր, լաւ չպաշտպանուած և նոյն իսկ յարձակման ենթարկուած բարձրագոյն շրջանակներու մէջ, հիմեց իր կոռակցութիւնը, զոր յաղթական հանդիսացուց, և որ Վիեննայի վերադարձուց կրօնքն ու միապետութիւնը: Վիեննային կը պարծի այսօր կաթողիկէ անունով, և Լուէկէրի կը պարտի իր գեղեցիկ մայրաքաղաքին մէջ ազատ ու գոհ քաղելու կարողութիւնը:

Այս աւստրիացի մեծ հայրենասէրը, որ փառաւոր յաղթութիւն մը տարաւ քրիստոնէական ընկերութեան վատ ու վայրագ թըշնամին իր սեփական հոգին վրայ հարուածելով, արժանի է իր ժամանակակիցներուն հիացումին և ցոյց կու տայ մեզի թէ քրիստոնէայ երկիր մը ինչպէս կրնայ ինքզինքը ազատել տղամարմնադրութեան ամօթալի բռնապետութենէն:

Լուէկէր ամէն բանի մէջ կաթողիկէ է: Իր պատարագ տեսնելու, ուրբաթը բռնելու ճշգրտահոլութիւնը առակի կարգ անցած է: Իր առանձնական կեսնքը ամէնուն յարգանքին առարկայ է: Սուրբ Կոյսին նկատմամբ ունեցած ջերմհռահոլութիւնը ամէն ամթի մէջ երեւան կու գար. «Մարիամ Կոյսին Զեր»

մեռանդ եղէք, կ'ըսէր Վիեննայի տղոց: Ամէն տղայ պարտական է Աստուծոյ մայրը սիրելու և զԱյն յարգելու»:

Այս քրիստոնեան հիւանդութեան առաջին յարձակումը զգալուն պէս, իր խոստովանանայրը պիտի կանչէ և՛ Քիչ մըն ալ ուղատէ՛, աճապարելու բան չկայ... ըսողներուն պիտի պատասխանէ. «Գործ մը պատշաճօրէն ընել ուղղը սպասելու չէ որ ինքզինքը կորսնցնէ»:

Լուէկէր կրնար նախարար ըլլալ, ուրիշ պաշտօններու, իր փառասիրութիւնը հրապուրելու կարող ուրիշ պատիւներու հասնիլ... Բայս այս բանին համար հարկ պիտի ըլլար թողուլ լքել իր ամբողջ կեանքը սպառող գործը, Վիեննայի քարենտրոգումը: Ինքը զայս չէր ուզէր: Ուստի ինք մնաց եւ պիտի մնայ «Մեծ Բաղաքապետը» որ Հապըսպուրկեան պետութեան կաթողիկէ ազատ և բարգաւաճ մայրաքաղաք մը վերապարգեւեց:

Ասկէ զատ Լուէկէր ունէր մարդոց առաջնորդ ըլլալու ամէն ձիւրքերը: Օժտուած էր այնպիսի արիութեամբ մը որ ունէ վտանգէ չէր վախնար. այնպիսի ճարտարխօսութեամբ մը որ բազմութիւնը իրեն կը յափըշտակէր, այնպիսի լաւ խառնուածքով մը որ ամէն յոգնութեանց կը դիմանար և իր հակառակորդները չփոթութեան կը մասնէր: Անշուշտ Աստուած ընարած էր Վիեննայի արուեստից փորձարաններէն մէկին ղոնապանին որդին՝ Աւստրիոյ ազգային և կրօնական վերանորոգման պետ ընելու համար: Եւ որովհետեւ Լուէկէր Աստուծոյ ձայնին անսաց, որովհետեւ հաւատարիմ մնաց իր կրօնական և ազգային հաւատքին, մեծ եղաւ իր հայրենիքին ամենէն մեծերուն մէջ: Եւ իր ամենէն խոնարհ քաղաքակիցներէն սիրուած ըլլալով ամէնուն տիպար և օրինակ մըն էր: Իր հակառակորդներն իսկ հարկադրուեցան զլուի ծռելու այս մեծ քրիստոնէի մահուան առջեւ, որ մեծ քաղաքացիի մը գեղեցիկ կեանքը կը պսակէր:

Տայ Աստուած ամէն երկիրներու՝ այս բարոյական արժէքով և այս քրիստոնէական հոգիով լի քաղաքապետներ:

ՍՈՒՐԲ ԿՈՅՍԸ ԱՆԱՐԳՈՂՆԵՐԸ. — Օր մը Պրիենեաններու մէջ բնակող Ծապաս իմաստուն բժիշկին քով մարդ մը դնաց որ սրունքին վրայ վէրք մը ունէր: Վէրքը հինգած և տարօրինակ երեւոյթ մը առած էր: Մէջը որդ կը գոյանար: Բժիշկը ջանաց դնէ որդերը բնաջինջ ընել. բայց ի դուր, ամէն միջոց անօգուտ եղաւ: Հիւանդը օր մը անոր ըսաւ.

— Տէ՛ր բժիշկ, բաւական է, այլեւս մի՛ աչխատիք, ես այս զգուելի ախտով պիտի մեռնիմ:

— Իրօք, պատասխանեց բժիշկը, արտաքոյ կարգի բան մը կայ ասոր մէջ: Ասանկ բան մը բնաւ տեսած չեմ, թէ եւ ձերացած եմ և ձեռքէս շատ զարմանալի դէպքեր անցած են:

Եւ քսաներորդ անգամ հարցուց հիւանդին.

— Ո՛ւր առիր այս վէրքը:

— Սպանիոյ մէջ, ինչպէս շատ անգամ ձեզի ըսած եմ, պատասխանեց ան. բայց ձեզի ըսած չեմ թէ ինչո՛ւ համար պիտի չըժշկուիմ: Կ'ուզեմ որ վերջապէս գիտնաք զայս:

Բան տարուան էի, շարունակեց տատանոտ ձայնով, երբ 1793ին, ստիպուեցայ միանալ զօրագունդի մը զօր Ազգային Փողովը Սպանիա կը զրկէր: Մեր աւանդէն մեկնեցանք երեք հոգի, Թովմաս, Ֆրանսուա և ես: Մենք նոյն առեւտուան գաղտնիքները ունէինք. անհատ առ էինք, մտեաւանդ թէ ամբարիշտ, նման երեք փոքր ստահակներու որ նորաձեւութեան հետեւիլը պարծանք կը համարին:

Ուղեւորութիւնը զուարթութեամբ կատարուեցաւ: Մեր տեղը հասնելու վրայ էինք երբ լեոնային գիւղէ մը անցնելու առեւտեանք Կոյսին մէկ արձանը, որ այնքան յարգուած էր, մինչ հակառակ յեղափոխութեան և յեղափոխականներու, անաղարտ մնացած էր իր պատուանդանին վրայ, եկեղեցւոյն դրան մօտ:

Մեզմէ մէկը աղետալի գաղափարը ունեցաւ այս արձանը անարգելու, գեղջուկնե-

րուն աւելորդապաշտութիւնը հեգնելու համար, Երեքնիս ալ հրացան ունէինք. Թովմաս առաջարկեց արձանին վրայ կրակ ընել, Ֆրանսուս քրքիջով մը ընդունեցաւ այս առաջարկութիւնը, Երկչոտօրէն և ընկերներէս նուազ յանդուգն երեւնալէ վախճալով փորձեցի ես կեցնել զանոնք զազատարէ մը որ ինծի սոսկում կը պատճառէր: Մայրս կը յիշէի... Վրաս խնդացին, Թովմաս հրացանը լեցուց և պարպեց: Դնդակը արձանին ճակատին հանդիպեցաւ, Ֆրանսուս ալ կրակեց և կուրծքին զարկաւ:

— Օ՛ր, ըմբի ինծի, կարգը քուկդ է:

Չիշխեցի ընդդիմանալ, դողդողալով նշան առի, ակումայ աչքերս գոցեցի և արձանին զարկի...

— Սրունքի՛ն, ըսաւ բժիշկը:

— Այո՛ սրունքին, ծունկէն վար, ուր կը գտնուի իմ վէրքս: Կը տեսնէք թէ պիտի չբժշկուիմ:

— Այս դեղեցիկ քաջագործութենէն ետքը պատրաստուեցանք մեր ճամբան շարուանակելու: Պառաւ մը որ մեզ տեսած էր, ըսաւ մեզի. «Դուք պատերազմի կ'երթաք, այս ըրածնիդ ձեզի յաջողութիւն պիտի չբերէ»:

Նոյն իրիկունն իսկ հասանք մեր զօրադունդին. մի քանի օր վերջը թշնամիին հանդիպեցանք, Կը խոստովանիմ որ կռուի կ'երթայի առանց խանդավառութեան. և առանց ուզելու՝ սաստիկ կը մտածէի Կոյսին արձանին վրայ: Սակայն ամէն բան լաւ անցաւ: Մենք աչքի զարնող առաւելութիւն մը ունեցանք. Թովմաս նշանաւոր հանդիսացաւ: Դործը գլուխ ելած էր. Թշնամին փախստեան մասնուած և գնդապետը նոր դադրեցուցած էր հետապնդումը, երբ ժայռէ մը եկած և կարծես երկնքէն իջած հրացանի հարուած մը լսուեցաւ: Թովմաս ինք իր վրայ դարձաւ, երեսի վրայ գետինն ինկաւ: Ֆրանսուս և ես փութացինք զայն վերցնելու. մեռած էր: Դնդակը ճակատին հանդիպած էր, երկու աչքին միջեւ, ճիշդ այն տեղը, ուր, մի քանի օր առաջ, իր գնդակը հանդիպած էր արձանին: Իրարու նայեցանք, Ֆրանսուս և ես, առանց բան մը ըսելու, մեռելէն աւելի զայլկանոր:

Գիշերը բաց օդի մէջ տնդուցինք. Ֆրանսուս քովս էր, բնաւ չքնացաւ: Կը ականէի որ ինծի խօսի, որպէս զի խորհուրդ տայի իրեն որ աղօթք մը ընէ. բայց ան լռութիւն պահեց և ես չհամարձակեցայ խօսակցութիւնը զարձնել մեզ արթուն կեցնող մտածման վրայ:

Յաջորդ օրը Թշնամին մեծ ուժով յարձակեցաւ: Չայն նշմարեցնուս պէս Ֆրանսուս ձեռքս սեղմելով ըսաւ.

— Այսօր կարգը իմս է, դուն բախտաւոր ես որ լաւ նշան չառիր:

Թշնառականը չէր սխալեր:

Այս անգամ մենք ետ մղուեցանք: Բաւական ատեն նահանջած էինք. Ֆրանսուս ինծի պէս առանց վէրքի աղատած էր: Սնոտի՛ յոյս, Հրացանի հարուած մը կու գայ փոսէ մը, ուր մահացու կերպով վիրաւորուած Սպանիացի մը ինկած էր, և Ֆրանսուս կ'իշնայ, գնդակը կուրծքէն մտած կռնակէն ելած էր: Ահ, տէ՛ր բժիշկ, ի՛նչ մահ. գետինը կը թապլտկէր, քահանայ մը խնդրելով. «Ի՞նչ գտնուողները ուսերնին թօթկեցին և շունչը փչեց: Ծամբուն վրայ թաղեցին զայն և գացին»:

Նոյն վայրկենին համոզուեցայ որ քիչ չանցած իմ գլխուս ալ փորձանք մը պիտի գայ. և առաջադրեցի դորձած սրբապղծութիւնս խոստովանիլ առաջին անգամ հանդիպելիք քահանայիս: Դժբախտաբար քահանայ չգտայ: Ասոր վրայ չաւ տարիներ անցան առանց աղէտի, և քիչ քիչ վախերժադրեցան, և անոնց հետ իմ բարի առաջադրութիւններս ալ անհետ եղան:

Երբ ետ կանչուեցանք, պատուի աստիճան մը ունէի. այլ ևս չէի խորհեր ո՛չ ոճիւրը, ո՛չ ղզղումը, ո՛չ ալ անպատիժը: Սահմանագլխին վրայ, արձանին գիւղէն օրուան մը ճամբայ հեռուն ամէն բան չիշխեցի: Անբացատրելի դիպումով մը մեր քարքերուն մէջէն հրացանի հարուած մը եկաւ վիրաւորեց զիս այն տեղէն զոր կը տեսնէք: Ստանկով կատարուեցաւ այն պատուին մարդարէնութիւնը, որ սրբապղծութենէն վերջը մեզի ըսաւ. «Պատերազմի կ'երթաք, այս ըրած»:

նիդ ձեզի յաջողութիւն պիտի չբերէ՝ Երկու ընկերներս մեռած էին, ես վիրաւոր ետ կը դառնայի։

Սակայն վերքը սկիզբը ծանր երեւոյթ մը չունէր։ Վիրաբոյժը ըսաւ որ քանի մը օր դարմանատունը մնալով պիտի ազատիս։ Ես ալ հաւատացի ըսածին։ Զարմանքը մեծ եղաւ, քիմ սոսկումիս չափ մեծ, երբ տեսաւ վերքին մէջ սա անջնջկի որդերուն գոյանալը, որոնք չփոթաթեան մայրնեցիք քու գիտութիւնդ։

Քսան տարիէ ի վեր, տէ՛ր բժիշկ, այս վերքը կը կրեմ, ամէն տեսակ դեղեր փորձեցի, ամէն ալ անօգուտ դուայ։ Սակայն թէեւ Աստուծոյ բժշկութիւն կը խնդրեմ, թէեւ կը յուսամ զայն իր ողորմութենէն, բայց տրտնջելու չեմ։ Չեմ տրտնջեր։ Այս վերքը դեղ եղաւ չափ մը հոգիներու, մանաւանդ իմինիս։ Գիտեմ որ եթէ կեանքիս վախճանին հասնիմ այնպէս ինչպէս որ պէտք է հասնիլ, այսինքն քրիստոնեայ եւ ազալ-խարոզ, զայս պիտի պարտիմ իմ սոսկալի վերքիս։ Այն ատեն պիտի ուրախանամ կազ ըլլալուս համար, որովհետեւ թէեւ բժշկութեանս վրայ կը տարակուսիս, բայց չեմ տարապիտիւր բնաւ ողորմութեան վրայ, եւ ամբապէս կը յուսամ Աստուծոյ շնորհքին մէջ մեռնիլ, միջնորդութեամբ Անոր զոր անարգեցի։

ԿԱՐԻՒՆԱԼ ՆԻՒՍԸՆ

ԳԵՐՈՆՏԻՈՍԻ ԵՐԱԶԸ

Ե.

... Ականջ դիւր այս ձայներուն։

Ասոնք կու գան հրեշտակային քնքուշ էակներէ, Աստուծոյ ամենէն խոնարհ եւ ամենէն մատաղս որդիներէն։

ՀՐԵՇՏԱԿԱՅԻՆ ԱՌԱՋԻՆ ՊԱՍ

Օրհնութիւն Սուրբին բարձրութեանց վրայ, Օրհնութիւն Անոր անդունդներու մէջ,

Իր խօսքերուն մէջ ըսքանչելի է, Հաւատարիմ՝ իր ճամբաներուն մէջ։

Մարդն, անոր որդին ամենակրտսեր, Հրաշալիք մըն էր նոր ծնած ատեն, Հոգի եւ մարմին անոր ծնողքն էին Եւ բընակարանն՝ երկինք եւ երկիր։

Աստուած օրհնեց զայն, մարգեց, հրահանգեց, Եւ ապա զրկեց զայն ասկէ հեռու, Որ երկրի վրան իր ախոյեանն ըլլայ Եւ հանդիսանայ յաղթող՝ տարբերու։

ՀՐԵՇՏԱԿԸ

Հիմայ մեծ դռնէն անցանք եւ Դատարանին մէջ կը գտնուինք։ Երկրի վրայ տաճարներն ու պալատները ճոխ ու չքնաղ, բայց բոլորովին նիւթեղէն, տարբերով շինուած են, բայց հոս հոգիներու աշխարհին մէջ, ան-նիւթէն ուրիշ բան չի գտնուիր բաղադրելու կամ կազմելու համար։ Ուստի այս շէնքին ամենափոքր մասերն անգամ, ինչպէս զարդաքիւղերը, դրուագները, վանդակապատները կամ աստիճանները, նոյն իսկ սալաշատակները, ամէնը կեանք են։ Այս կեանքը կը կազմեն, երջանիկ անմահ էակներ որ շարունակ կ'երգեն Արարչին օրհնութիւնները։

ՀՐԵՇՏԱԿԱՅԻՆ ԵՐԿՐՈՐԴ ԴԱՍ

Օրհնութիւն Սուրբին բարձրութեանց վրայ, Օրհնութիւն Անոր անդունդներու մէջ։

Իր խօսքերուն մէջ ըսքանչելի է, Հաւատարիմ՝ իր ճամբաներուն մէջ։

Վա՛յ թշուառ մարդուն։

Ծոյց տուաւ ստոր վատաստութիւն, Զրկուեցաւ երկնից ժառանգութենէն Եւ անոնց լոյսին մասնակցութենէն։

Երկինքը հիմայ մութ ու խաւար է, Փոթորիկն անոր շուրջը կը գոռայ, Ինք որ երբեմն էր հրեշտակաց եղբայր, Անասուններու ընկեր եղած է։

Մարդն իր վաշտագ, հրէշ ծնողքներուն Իշխանութենէն փրկուելու համար Բարայրներու մէջ ապաստանեցաւ Եւ ծառերու վրայ եղաւ մազլի։¹

Վախի, երկիւղի եւ յոյսի միջեւ,

Բախտի հոսանքէն ալ տարուբերուած ,
Ամբողջ կեանքին մէջ և որդւոց որդի
Կը տառապէր նա և կը տապնապէր :

Այսպէս դարէ դար քաւեց անիկայ ,
Եւ սկսաւ ալ տակաւ առ տակաւ
Իր բարձր վայրագ թողուլ լքանել
Եւ դառնալ ըլլալ մարդ բարեբարոյ :

Եւ աստուածային շունչով տոգորուած
Եւ զաւազանի հարուածով պատժուած
Եւ այցելութեամբ հրեշտակաց կրթուած
Վերջապէս զԱստուած փնտռելու սկսաւ :

Ուսաւ Աստուծոյ անունը կոչել
Եւ կազմակերպել անոր հաւատքով
Տուն , տեղ , ընտանիք , հայրենի աշխարհ
Գիւղեր , քաղաքներ և պատուութիւններ :

Փա՛ռք պատիւ անոր որ կամաց կամաց
Եւ համբերատար երկայնմըտութեամբ
Կրցաւ նորէն կեանք տալ ժողովրդեան
Իր օրհնութիւններն երգելու համար :

ՀՈԳԻՆ

Ձայնը կը նմանի հովին ուժգին զղրդիւ-
նին — բարձրաբերձ շոճիներու մէջէն փչող
հովին . — զլրլրէն տարօրինակ , երաժշտա-
կան որ մերթ կը սաստկանայ մերթ կը սկա-
րանայ և ամէնուրեք կ'արձագանդէ . մինչ
այս հովէն շարժող ճիւղերէն հոգեզմայլ բոյ-
րեր կը հոսին :

ՀՐԵՇՏԱԿԱՅԻՆ ԵՐՐՈՐԴ ԴԱՍ

Օրհնութիւն Սուրբին՝ բարձրութեանց վրայ ,
Օրհնութիւն Անոր՝ անդունդներու մէջ .

Իր խօսքերուն մէջ ըսքանչելի է .

Հաւատարիմ՝ իր ճամբաներուն մէջ :

Հրեշտակաց գունդերն , ինչպէս պատշաճ էր
Իրենց յոյժ անօր և նրբին բնութեան ,
Մէկէն փորձութեան եղան ենթակայ
Եւ արքայութիւնն երկնից շահեցան :

Անոնց համար ո՛չ շուք , ո՛չ արշալոյս ,
Ո՛չ անկում և ո՛չ յառաջդիմութիւն .
Դիշեր մ'էր համակ անյոյս և անլոյս
Եւ կամ թէ ցերեկ յաւիտենական :

¹ Հոս հեղինակը հաւանականաբար նախա-
պատմական դարերու կ'ակնարկէ :

Սակայն յետածին ժողովուրդին վրայ
Պիտի ցոյցլար նըշոյլ մը յոյսի .

Եւ անոր համար աներկբայօրէն

Երկրորդ արշալոյս մը կ'ելլէր տակաւ :

Կը բացուին դարերը և կը զատեն

Անպիտաններէն պատուական յարգին .

Եւ խոտազոյն պինդ կարծր զանգուածէն

Կ'ելլեն կը կանգնին շնորհքի զաւակներն :

Եւ այս կերպով այս վերածնունդէն

Կայծ մը լուսափիւռ կը փայլատակէ .

Եւ մարդը կ'ընէ ինչ որ էր առաջ .

Երկինքն և երկիրն կը միացնէ :

Բայց սակայն երկնից և երկրի միջեւ

— Իր ճամբորդութիւնն և իր նպատակն , —

Կը սպասէ անոր հոգւոյն և մարմնոյն

Տաքնապ մը կրկին և ահասարսուռ :

Ձինք կ'ընկճէ կրկին պարտականութիւն , —

Մեղքին սոսկալի ոճիրն ու եղեռն .

Մահուան ցրտութիւնն անցած դացած է ,

Եւ կրակն ահեղ կը սկսի ահա :

ՀՐԵՇՏԱԿԸ

Անոնք կ'երգեն քու վերահաս հոգեվարձդ ,
որուն մասին այնքան սախալաւ հարցմունք-
ներ ըրիր : Ահաւասիկ , մարմնացած Աստու-
ծոյ Երեսը տեսնելով սուր և նուրբ ցաւով
մը պիտի շանթահարուիս . բայց այս տեսու-
թենէն մնացած յիշատակը դերազանց դար-
ման մը պիտի ըլլայ բացուած վէրքը բուժե-
լու , զայն ծանրացնելով հանդերձ :

ՀՈԳԻՆ

Խորհրդաւոր կերպով կը խօսիս : Սակայն
ինծի կ'երեւի թէ կրնամ խօսքերուդ իմաստը
հասնել . բայց նախամեծար կը համարիմ քու
հրեշտակային ձայնդ լսել քան ես անձամբ
քու միտքդ բացատրել :

ՀՐԵՇՏԱԿԸ

Ուստի երբ — եթէ քեզի շնորհուի —
տեսնես քու Դատաւորդ , կրցածիդ չափ
դողտր ո՛ւր և պատկառանք պիտի զգաս :
Սեռե պիտի նուաղիս , անբացատրելի բաղձանք-
ներով դիպի Իրեն պիտի մղուիս : Միեւնոյն ա-
սեմ պիտի սխալուիս ցաւիդ որ ինձը — որ Սեռն
խիլ ե — քեզի նկատմամբ ունեցած գուրբն գո-

րովին համար քեզի պես ստորին հասիւն կողմէ
այնքան անարգութի յանձն առաւ: Անոր խորու-
զնին այնքան լեզ փայլող աղերսարկու ակ-
նարկը քեզ ի խոր պիտի խոցէ եւ պիտի խառնէ:
Եւ դուն քեզ պիտի ասես, որովհետեւ քեզ աշխի
մեղքի գործ ես, բայց ցարդ զգացածեղ աւելի
պիտի զգաս քե մեղանկաւ ես. այո՛, դուն քեզ
պիտի ասես, դուն քեզի պիտի պիտի րդաս.
պիտի ուզես փոխարին հեղանակ իր տեսութեան:
Միանգամայն իր առջեւ կենալու անընդունելի
փափաք մը պիտի ունենաս: Այս ներհամար եւ
աստիկ ցաւերը, իր կարօքը երբ զինք չես տես-
ներ, եւ այն ամօքը զոր քեզի կ'ազդէ զինքը
տեսնելու մտածումը, պիտի կազմեն քե խառ-
կան, քե անհեղինակ տակաւի փառանք:

ՀՈԳԻՆ

Հոգիս ինքն իր տէրն է, չեմ վախնար,
— իր քաղցր իշխանութեան մէջ սուղուած
ըլլալով պատրաստ եմ վայելելու կամ կրելու:
Մի՛տ դիր: Յորդանոս ջուրերու խորունկ եւ
հանդիսաւոր ձայնին պէս մեծ եւ խորհրդա-
ւոր ներդաշնակութիւն մը կը գրաւէ զիս:

ՀՐԵՇՏԱԿԸ

Դէպի գերագոյն վայրը հանող աստիճան-
ներուն մօտ հասած եմք:

Հո՛ն, հզօր հրեշտակներ ամէն կողմէ
մուտք կը պահեն՝ մարմնացեալ Աստուծոյ
օրհնութիւններ երգելով:

ՍՐԲԱԶԱՆ ՍՍՏԻՃԱՆՆԵՐՈՒՆ ՀՐԵՇՏԱԿՆԵՐԸ

Ո՛վ Հայր, որուն բարութիւնը մի միայն
քեզ դէմ առ դէմ տեսնողները կրնան ճանչ-
նալ. ի նուազ մարդուն քու յաղթող շնորհքդ
փայլեցաւ անսահման կերպով:

Բայց ինչպէ՞ մարդը — մէկ օրուն աս-
րարածը — աս շնորհքը տարփողելու անկա-
րող է: Քու տարած յաղթութիւնդ երգելու
համար պէտք էր հրեշտակի մը անմահ հուրը,
հրեշտակային ընդարձակ միտք մը:

Պէտք էր այն հրեշտակը, որուն — երբ
Պարտէզին ստուերին մէջ ահիւ եւ զօղու-
թեամբ կ'երկրպագէր — արուեստ — իրեն
պէս արարածի մը — մխիթարել մեծ Արա-
րիչը անոր նուազման պահուն. — որ զԱ-

նիկայ հոգեւորքի մէջ տեսաւ իբրեւ զո՛ն իր
սեփական օրէնքին:

Որովհետեւ ո՛վ կրնայ զի՛նքը գովել իր
բարձրութեան եւ իր խորութեան մէջ, ինչ-
պէս այն որ նոյն անսահման պայքարին
մէջ անոր տագնապիլը տեսաւ:

ՀՐԵՇՏԱԿԸ

Մի՛տ գիր: — Դերագոյն վայրին մուտ-
քին դռներուն բարաւորները կը թրթռան եւ
մեղի կը զրկեն սո յանկերը, որ կ'արձա-
գանգէ:

ՀՐԵՇՏԱԿԱՅԻՆ ՉՈՐՐՈՐԴ ԴԱՍ

Օրհնութիւն Սուրբին բարձրութեանց վրայ,
Օրհնութիւն Անոր անդունդներու մէջ,
Իր խօսքերուն մէջ ըսքանչելի է,
Հաւատարիմ՝ իր ճամբաներուն մէջ:

Ոստին հայնոյեց ընդդէմ Աստուծոյ
եւ գանգատեցաւ ու արտունջ ըրաւ,
Որ Ան բարձրացուց եւ յառաջ տարաւ
Մարդն իր փայփայած ու քղուած զաւակն:

Որովհետեւ, ան կ'ըսէ, ըստ կարի,
Ունենալով այս բովանդակ ձիւքերն,
Խեղճ ողորմելի պահապան մըն էր,
Էակ մը կազմուած միտէ, արիւնէ:

Իբրեւ թէ անի որ կը կարօտի
Իրեն օգնական մի ընկերակցի,
Կարենար կուտիլ այն հրեշտակային
Ըմբոստ եւ հըպարտ էակներուն հետ:

Եւ երբ եւային ստերիւրանքով
Մարդն առաջին վար ինկաւ, գլորեցաւ,
Անիկայ դոչեց յաղթականօրէն,
«Պահապան մը խեղճ եւ ողորմելի»:

Աստուած, իր խօսքովը պարաւանդուած,
Չի կրնար գանի փրկել աղատել:
Չայն ինք իր բախախն պիտի թողու, լքէ:
Միեցեալ զաւակը պիտի մեռնի:

ՀՐԵՇՏԱԿԸ

Հիմայ սեմը, ուսկից կ'անցնինք, կը պա-
տախտանէ ուրախալի երգով մը:

ՀՐԵՇՏԱԿԱՅԻՆ ՀԻՆԳԵՐՈՐԴ ԴԱՍ

Օրհնութիւն Սուրբին բարձրութեանց վրայ,
Օրհնութիւն Անոր անդունդներու մէջ:

իր խօսքերուն մէջ ըսքանչելի է .
Հաւատարիմ՝ իր ճամբաներուն մէջ .
Ո՛վ իմաստութիւն սիրոյ մեր Տիրոջ .
Ամենուրեք մեղք . ամէն տեղ ամօթ .
Ինքն իբրեւ երկրորդ Ազամ երեւցաւ
Կոիւ մըղելու , փրկելու համար :

Ո՛վ Սէր իմաստուն , մարմին եւ արիւն ,
Որ յանցանք գործած էին Ազամով ,
Պիտի կոռւէին դեռ թշնամւոյն դէմ ,
Պիտի կոռւէին , պիտի յաղթէին :

Եւ , շնորհքէն վեր , ուրիշ մի պարզեւ
Մարմին եւ արիւն պիտի նրբացնէր ,
Ներկայութիւնն նոյն ինքնն Աստուծոյ
Իր աստուածային էութիւնն համակ :

Սէր վեհանձնականն որ պիտի կոռւէր
Իրրեւ նոյն իսկ մարդ եւ մարդուն համար ,
Եւ պիտի կրէր կրկին հոգեվարք ,
Իբրեւ նոյն իսկ մարդ եւ մարդուն համար :

Եւ , ծածուկ կերպով , Պարտէզին մէջէն
Եւ երկնասլացիկ խաչին վերեւէն
Իր եղբայրներուն պիտի սորվեցնէր ,
Վիշա եւ նեղութիւն կրել եւ մեռնիլ :
Փարգմանեց ԱՐՁԱՆ
(Նառուցակիլի)

Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

ՀՈՌՄ ԵՒ ԿԱԹՈՂԻԿԷ ԱՇԽԱՐՀ . — Հոռմ ,
27 (Մ .) . — Վեհ . Սուլթանին գահակալու-
թեան տարեգարձին առթիւ Հոռմի օտմ . դես-
պանատան մէջ տեղի ունեցած ընդունելու-
թիւնը ներկայ պարագաներու բերմամբ ա-
ւելի հանդիսաւոր եւ աւելի սպաւորիչ հան-
գամանք մը ստացաւ : Դեսպանատան իմամ
Վէլի էֆ . աղօթելով երկարատեւ թաղաւո-
րութիւն մը մաղթեց Սուլթանին եւ երկ-
նային օրհնութիւն հայցեց Թուրքիոյ եւ իր
զինակիցներուն Գերմանիոյ եւ Աւստրիոյ վերջ-
նական յաղթանակին համար : Այս արարո-
ղութեան ներկայ էին գերման դեսպան Պիւ-
լով եւ իշխանուհին՝ դեսպանատան պաշտօ-
նէութեան հետ , աւստր . դեսպան պատոն

Մաքիոյ իր պաշտօնէութեան հետ . Բրուսիոյ
եւ Պալիերիոյ դեսպանները , Մարաշի Կ .
Հայոց առաջնորդ Աւետիս Արք . Արիարեան ,
որ վաղը կը մեկնի իր պաշտօնատեղին , Ա-
սորիներու արք . Տ . Շէլիտ , ինչպէս նաեւ
Հայ-Կաթողիկէ , Մարոնի , Մելքիդ եւ Ասորի
Կաթողիկէ հասարակութեանց պետերը , Ա-
զիզ եւ Ճէմալ Թօսուն իշխանները , Թուր-
խան փաշա , Դեսպանատունը փայլուն կեր-
պով լուսաղարդուեցաւ :

* * Սրբազան Բահանայապետը 25,000
Փր . շրկեց կարդինալ Մէրսիէի՝ պեւթ ժողո-
վուրդին համար եւ 25,000 քուռօն Բրաքո-
վիոյ եպիսկոպոսին՝ լեհ ժողովուրդին համար :
(Կ . Գ .)

* * Վիեննայի մէջ Ապրիլ 18ին կէս օրէն
եւաքը իսլամ բաղնիքեան առջեւ տեղի ու-
նեցաւ կաթողիկէ ընկերակցութեանց թա-
փօրը , առաջնորդութեամբ Կարդինալ Բիֆլի .
աղօթելու համար Աւստրիականագարիոյ եւ իր
դաշնակիցներուն բանակներուն յաղթանա-
կին համար : Թափօրը , որուն մասնակցեցան
զրկթէ 30,000 հոգի , զնաց մայր եկեղեցին ,
ուր բաղնիքի արհիդքսուհիներ եւ պաշտօ-
նատարներ ներկայ եղան արարողութեան :
Ս . Պապին յանձնարարութեամբ խանդաղու-
թեան համար աղօթքով վերջացաւ արարո-
ղութիւնը :

* * Հոռմէն կը հեռագրեն Բեռլինից Զայ-
քունկի թէ , կ'ըսէ Լա Թիւրֆի , Բ . Դրան ար-
տօնութեամբ Երուսաղէմի կաթողիկէ եկե-
ղեցիներուն վերաբացումը , որ պատերազմին
սկիզբները փակուած էին , լաւագոյն սպա-
ւորութիւն մը գործած է Վատիկանի շրջա-
նակներուն մէջ :

* * Ապրիլ 11ին իր Բէլիիի ամարտնոցին
մէջ վախճանեցաւ Մաքիդ Յուլիոս աէլլա
Բիէզա Սրբազան Բահանայապետին եղբայրը :

* * Արհի . Մարէլլի անուանուած է ե-
պիսկոպոս Պերկամայի , որ վերին Իտալիոյ
կաթողիկէութեան ընկերական կեդրոնն է :

* * Պերլին , 28 . — Նոյե Հարլանյէ Գուրան
թերթը կը հաղորդէ թէ պէտք է որ Ս . Պա-
պը միշտ հնարաւորութիւն ունենայ պատե-
րաղմիկներուն հետ յարաբերութիւն ունենա-

լու հոլանտական դիւանագիտութեան միջոցաւ, այն պարագային՝ ուր իր ըրած խաղաղութեան առաջարկը լաւ ընդունելութիւն գտնէ պատերազմիկ Տէրութեանց, կողմէ։ Այս պատճառաւ հարկ էր պաշտօնական յարաբերութիւններ հաստատել Ստորին-Պաւլուաց եւ Վատիկանի միջեւ։ Եթէս եկեղեցականը Հռոմ զրկուած է՝ այս մասին նախնական բանակցութիւններ ընելու համար։

(Ս. Մ.)

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԿԱՐԱՆ. —

Պատրիարքական Կղերանոցի աշակերտները Ուսումնարանի շէնքին, որ իբր Կղերանոց շինուած է, վերին սրահին մէջ զհանդուեցան. ընդ հսկողութեամբ իրենց Մեծաւոր Գեր. Անտոն Վ. Մէրճիմէքեանի։

Մայիս ամսուան Զերմեռանդութիւնները ըստ սովորութեան պիտի կատարուին այս տարի Աւագ Թեմի եկեղեցիներուն մէջ։

Ա. Աստուածածին Աթոռանիստ եկեղեցւոյ մէջ, այսօր, իրիկունը պիտի կատարուի Մայիս ամսուան բացումը։ Ամէն օր ժամը 4։30ին Վարդարան եւ Մայիսի յառուկ աղօթքները պիտի ըսուին եւ ապա Ս. Հաղորդութեամբ օրհնութիւն պիտի արուի։

Չորեքշաբթի, ուրբաթ եւ կիրակի օրերը օրհնութիւններն առաջ պիտի քարոզէ նոյն եկեղեցւոյ Մեծաւոր Կ. Վ. Աստուերեան։

Կիրակի օրերը Վարդարանի տեղ երեկոյեան ժամերգութիւն պիտի ըսուի։

Ս. Քահանայապետին վերջին տրամադրութեան համեմատ, այս տարի Մայիս ամսուան աղօթքներուն հետ ամէն օր պիտի ըսուի նաեւ Նորին Սրբութեան կողմէ խաղաղութեան համար շարադրուած աղօթքը, որուն համար, ամէն անգամ ըսուելուն, 300 օրուան ներողութիւն շնորհուած է. իսկ իրականաբար ներողութիւն շնորհուած է անոնց, որ առ նուազն 20 անգամ ներկայ գտնուելով Մայիս ամսուան աղօթքներուն, եւ խոստովանելով եւ հաղորդուելով կ'աղօթեն ըստ զիաւարտութեան Նորին Սրբութեան։

Արհի. Տեղապահ Մայեղեան Արքեպ. ձեռք առաւ Ս. Գրիգոր Լուսաւորիչ վար-

ժարանին վարչութիւնը. հետեւաբար նոյն վարժարանը աշակերտ զրկելու արգելքը վերացուեցաւ։

Ամսոյս 19ին, կիրակի օր, Վիեննական Մխիթ. Հարց Բանկայթիի Ա. Յղութեան Ժողովրդապետական եկեղեցւոյն մէջ տեղի ունեցաւ նոյն Ժողովրդապետութեան սղայոց առաջին Հաղորդութիւնը, նախադահութեամբ Կ. Պ. Փոխանորդ Արհի. Ռոքոսեան Յովս. Արքեպ. ի. Հանդէսը շատ փառաւոր եղաւ, եւ Զայնաւոր Պատարագի երգեցողութիւնը շատ կանոնաւոր եւ ազդեցիկ։ Հաւատացեալներէն ալ մեծ բազմութիւն մը մօտեցաւ Ս. Խորհուրդին։

Հանդէսէն վերջը Արհի. Փոխանորդը եւ ներկաներէն շատեր զգածուած շնորհակալութիւն յայտնեցին Վեր. Հարց, — ի մասնաւորի Ժողովրդապետ Հ. Ստեփան Հարոնեանի, — որոնք առաքելաձայն աշխատութեամբ կը ծաղկեցնեն այդ կարեւոր Ժողովրդապետութիւնը։

ՆԵՐՔԻՆ ԵՒ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾԵՐ. —

Ապրիլ 27ին, բոլոր օմանցիները մեծ ուրախութեամբ տօնեցին իրենց Օգոստոսիառ Վեհապետին՝ Սուլթան Մէհմէտ Ե. Կայսեր գահակալութեան բարեբաւարիկ տարեդարձը։ Հանրային ու մասնաւոր բոլոր հաստատութիւնները եւ շոգենաւերն ու նաւերը դրօշադարձութեան եւ պիչերն ալ լուսավառութիւններ եղան։ Կէսօրին թնդանթներ արձակութեան որոշուած տեղերէն։ Նախարարները, ժեղապետականները, երեսփոխանները եւ կրօնային, քաղաքային ու զինուորական բարձրաստիճան պաշտօնատարները եւ հոգեւոր պետերը Կայսեր ներկայանալով իրենց շնորհաւորութիւնները մատուցին։

Գաւառներու մէջ ալ միեւնոյն հանդէսները տեղի ունեցած են։

Նախարարաց Խորհուրդին նախաձեռնութեամբ Շէյխ իւլ Իսլամ էֆեն Զեքիա մը տուաւ, որով Փատիշահ ու Խայրֆա Վեհ. Սուլթան Մէհմէտ Ե. կը ստանայ «Դաւի» տիտղոսը։

Ահաւասիկ Նախարարաց Խորհուրդին կողմէ Կայսեր մատուցուած տեղեկագիրը։

«Աստուծոյ օգնութեամբ կայս . բանա-
կին ու նաւատորմին զանազան կէտերուն
վրայ ձեռք բերած բազմաթիւ յաջողութիւն-
ները եւ մանաւանդ Տարածանէլի ծովային ու
ցամաքային յաղթանակները այն տեսակ ա-
մենաբարձր արարքներ են որ իրաւամբ հարկ
կը դատեն «Ղազի» փառաւոր ախողոսը կցել
Ձեր կայս . անունին : Այդ մասին տրուած
նուիրական Ֆերման Ձեր Վեհափառութեան
կը մատուցուի : Ուստի կը խնդրենք որ բա-
րեհաճիք թոյլ տալ , որպէս զի Ձեր մեծա-
նուն նախնիքներուն պէս «Ղազի» ամենա-
բարձր ախողոսը գործածուի նաեւ Ձեր Վե-
հափառութեան կայս . անունին հետ :»

Ահաւասիկ այս մասին ելած փերմանին
թարգմանութիւնը .

«Աստուծոյ առաքելային Խալիֆա Սուլ-
թան Մէհմէտ Րէշատ Խան Ե . այս անգամ
ըստ Շէրիի տեղի ունեցած կայս . պատերազ-
մին մէջ ոպառաղինեց ու զոկեց իսլամ գին-
ուորներ և կրօնքի ու ազգի թշնամիին դէմ
նուիրական պատերազմը ի գործ դնելու ան-
կեղծ նպատակով կը պատերազմի : Հետեւա-
բար ըստ նուիրական տրամադրութեանց մեր
Օգոստ ափառ Խալիֆային «Ղազի» ըլլալը Շէ-
րիին համաձայն հաստատուած է : Ուստի օ-
րինաւոր և ընդունելի՞ է որ անոր կայս . ա-
նունը ամէն տեսակ հրամաններու , աղօթք-
ներու մանաւանդ «խուլթպէ»ներու մէջ «Ղա-
զի» ախողոսով յիշուի :

Պատասխան . — Այո՛ :

* Օսմ . ընդհ . բանակետդէն Ապրիլ
13/26ին կը գեկուցուի . — Ա . Թշնամին Ապրիլ

12/25ի առտուն իր մարտանաւերուն պաշտ-
պանութեան ներքեւ փորձեց զօրք ցամաք
հանել Կէլիպօլուի թերակղզիին արեւմտեան
կողմէին չորս կէտերուն վրայ , այսինքն Սը-
զըն Տէրէի գետաբերանը , Քապա Թէփէի ա-
րեւմտակողմը , Արը Պուրնուի ու Թէքքէ
Պուրնուի չրջակայքը , ինչպէս նաեւ Բում Բա-
լէի չրջակաները :

Թէքքէ Պուրնուի չրջակայքը ցամաք ել-
լով թշնամի զօրքերը սուլնաւոր յարձակ-
մամբ ծովը թափուեցան : Արը Պուրնուի չըր-
ջակայքը ցամաք ելլող թշնամի զօրքերը , որ
փորձեցին յառաջանալ , մեր ուժերուն յար-
ձակման հետեւանօք հարկադրուեցան նա-
հանջել և ծովեղբք քշուեցան : Այս կողմերը
գանուող թշնամի զօրքերուն մէկ մասը երէկ
գիշեր հարկադրուեցան խուճապով փախչիլ
իրենց մակուկները : Այսօր եւս մեր զօրա-
խուճաքերը յաջողութեամբ կը շարունակեն ի-
րենց յարձակումները բոլոր ճակատներուն
վրայ :

Երէկ , միեւնոյն ատեն , թշնամի նաւա-
ստորմ մը ննչուցին մօտեցաւ ծովի կողմէ
բունի անցնելու համար , բայց մեր կրակին
առջեւ հարկադրուեցաւ ետ քաշուիլ : Այս
գործողութեան միջոցին թշնամի թորփիլա-
նաւ մը ընկղմեցաւ և ուրիշ թորփիլա-
նաւ մը որ ծանրապէս վնասուած էր , քըշ-
ուելով տարուեցաւ Թէնէտոս :

Թշնամին այսօր ծովի կողմէ ոեւէ փորձ
չըրաւ ննչուցին դէմ :

Բ . — Միւս ռազմադաշտերուն վրայ կա-
րեւոր փոփոխում չկայ :

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Դէպքեր եւ սկզբունքներ	113
Պիսս ժ .	116
Այլեւայլ	119

Գերմեիսի Երազր	123
Տեղեկագրական	126

ԱՐՏՈՆԱՅԻՐ

ՅՈՎՀ . Ծ . Վ . ԿԵՏԻԿԵԱՆ



ՏՆՕՐԷՆ-ԻՄ ԲԱԳՐԱԳԵՏ

ԳԼՈ : Գ . Վ . ԹԵՐԶԻՊԱՇԵԱՆ

The first of these is the fact that the
the second is the fact that the
the third is the fact that the
the fourth is the fact that the
the fifth is the fact that the
the sixth is the fact that the
the seventh is the fact that the
the eighth is the fact that the
the ninth is the fact that the
the tenth is the fact that the

The first of these is the fact that the
the second is the fact that the
the third is the fact that the
the fourth is the fact that the
the fifth is the fact that the
the sixth is the fact that the
the seventh is the fact that the
the eighth is the fact that the
the ninth is the fact that the
the tenth is the fact that the

The first of these is the fact that the
the second is the fact that the
the third is the fact that the
the fourth is the fact that the
the fifth is the fact that the
the sixth is the fact that the
the seventh is the fact that the
the eighth is the fact that the
the ninth is the fact that the
the tenth is the fact that the

The first of these is the fact that the
the second is the fact that the
the third is the fact that the
the fourth is the fact that the
the fifth is the fact that the
the sixth is the fact that the
the seventh is the fact that the
the eighth is the fact that the
the ninth is the fact that the
the tenth is the fact that the

The first of these is the fact that the
the second is the fact that the
the third is the fact that the
the fourth is the fact that the
the fifth is the fact that the
the sixth is the fact that the
the seventh is the fact that the
the eighth is the fact that the
the ninth is the fact that the
the tenth is the fact that the

The first of these is the fact that the
the second is the fact that the
the third is the fact that the
the fourth is the fact that the
the fifth is the fact that the
the sixth is the fact that the
the seventh is the fact that the
the eighth is the fact that the
the ninth is the fact that the
the tenth is the fact that the

The first of these is the fact that the
the second is the fact that the
the third is the fact that the
the fourth is the fact that the
the fifth is the fact that the
the sixth is the fact that the
the seventh is the fact that the
the eighth is the fact that the
the ninth is the fact that the
the tenth is the fact that the

THE FIRST OF THESE IS THE FACT THAT THE

1	2	3	4	5	6	7	8	9	10
11	12	13	14	15	16	17	18	19	20
21	22	23	24	25	26	27	28	29	30

31	32	33	34	35	36	37	38	39	40
41	42	43	44	45	46	47	48	49	50
51	52	53	54	55	56	57	58	59	60

61	62	63	64	65	66	67	68	69	70
71	72	73	74	75	76	77	78	79	80
81	82	83	84	85	86	87	88	89	90

91	92	93	94	95	96	97	98	99	100
101	102	103	104	105	106	107	108	109	110
111	112	113	114	115	116	117	118	119	120

